



186. ԱՆԿԻՆԸ

Մին մարթ, մին կնեկ են իլալ, ըտրանց իլալ ա իրեք ախճիկ։
Մեծ ըխճըկանը անումը Անուշ էր, միշնակինը՝ Անիկ, կումի ըխ-
ճըկանն էլ՝ Անկին։

Ծարանց միշին Անկինը լոխճան նախշուն, լոխճան խելումք էր։
Էս ըխճըկերքը մըզմըծացալ ին, տնիլի վախտը հսալ էր։ Ծատ-
րանց մերը պատառ խելքան թիթեվ էր, հերն էլ իշկի խելք շօ-
ներ, լափ սարսաղ էր, սարը լակ։

Էտ խելքան թիթեվ կնեկը աման օր մարթին զահլան տանում
էր, թա։—Ըխճըկորցտ տար կուրցուրու, էլ տրանց իրեսը տեսնամ
զեշ, բոլ ա հիշքան պահալ եմ։ Ընդրա սարսաղ մարթն էլ կնգանը
խելքավը ընդուավ, մին ըռավետ ըխճըկորցը եր կալավ, մին քանի
բռնքյուն հաց պատառեց մին յալլուխում, կապեց Անուշին մեշկին,
քյնացին մին դոլի յրա։ Սաղ օրը ճնապա քյնացին, հսան մին
մեծ ծմակի տակ Ապերը, ծմակին տակին մին կանանչ խօնիք կար,
էտ խոնիքին կնշկոտումը նստեց, թա։—Պերեք մին պատառ հաց
օտենք։

Անկինը մին կուտուր հաց տրանվ պըրանհնմը, ծամեց, ծա-
մեց, կարաց վեշ թա կոլ տա, ասեց։—Ապեր, ծարավ եմ, ըռանց
նիրի հացը կոլ չի քինում։ Անիկը, թա։—Ես էլ եմ ծարավ, Անուշը,
թա։—Ես էլ, Ապերն էլ թա։—ԼՀԱ ես էլ եմ ծարավ, էս բռնքյունը
ես պենդ թոլ անեմ, տռնք ենդան վազ տվեք, շտեղ վեր ինդուավ,
ընդեղ ախսպնք եք ճրիլու, կոշտ կը խմեք, էս բռնքյունն էլ կտը-
նեք ճիրին մելը, լավ ճռնք ծծի ջանը, կպիրեք, ես էլ թրշած
բռնքյունը կոտեմ։

Ապերը հիշքան օժումը կար, բռնիքյանը պեսդ յրա ըրավ, բռնիքյանը թոլ ինիլավ, հումց վեր արարի թաքյար, քյնաց լափ ծուրումը կոխսկին ընդյանի: Ըխճեկերը մին մինի առաջ կտրիլավ, վազ տվին քյնացին բռնիքյանին ենդան, Ըսկըսեցին բռնիքյանին շորս դոլերը ման կյալ, տընզըղիլ, մին էլ տեսան, Անկինը կանլեց.— Ախապաւը քթալ եմ, եկեք ըստեղ, ախապաւը, ախապաւը: Իրեքանն էլ հըվըքվեցին ըխպըրին շորս զոլը: Ախապաւը, հինչ ախապաւը, հումց վեր քամհրը-քամհրը, զուլալ մարքարիգ: Ախապաւը հեն էր էրկու մեծ քարի զաթում, ճիրին տական նհենց էր պճպընում, ասես լհա իփիլիս իներ, պըլպըլտում էր Առաջ Անկինը յրա ընդյավ, վեր մին կոշա խմի, ամմա կարաց վեշ, էրկու կոլտում կոլ տվավ ետքաշվեց, քըթըծըկերավը կազը տհաւ եկը: Ասիլ շես, էտ ճհկը թըթո ճհկը ա: Անկինը քվորցը հրցըրուց, թա-թա լավ, մեր ապերը հինչ էր զյուղինմ, վեր բռնիքյանը արարի թաքյարի դայդի թոլ ինիլավ կյալ պիտի էս սըտընի ախապաւըին կոխսկին եր ինդի:

Բռնիքյանը տըրան ճիրին միշին, վեր ճհկը ծըծի, կըկըղի, տանեն ապուրը, էն էլ կարա օտի: Ուրանք ամման մինը մին քանի հետ յրա ընդյան կոշտ խմեցին, ծարավին կուտրեցին, ենդան տեղներան եր կըցան, բռնիքյանը ճըրան հընեցին, հղի իլան դըրա ապուրը կոխսկը: Տհաւ եկին դանշար, տեսան ապերը հենա խութին կլյսին կազնած, հիշքան կընլեցին, ծերքավ ըրին, վեր ապերն էլ ցորտ-ցորտ թըթո ճըրան մին կոշտ խմի, ամմա ապերը տեղան տհկրիւր չի եկը: Տհսան վեր ապերը սաս չի հանում, ուրանք պըցըրացան, հսան ապուրը կոշտը, մնացին դյունաքար, ընդեղ ապեր չի կար: Ապերը ուրան ծերքին մըհակը տնդալ էր, շուխան քցալ յրան, ինքը կորալ:

Ըխճեկերքը զըուխմիշիշի իլան, լաց իլան, շորս դոլերը լավ ման եկին, ապեր չի կար: Ապերը ըխճեկորցը թողալ էր ըտեղ, ինքը փախալ:

Դըրենիքանդին վախտին ետ տառան եկին ապուրը շուխսին կոխսկը, խելք խելքի տվին, թա հինչ անեն, թո՞րը քյնան: Հղի իլան դըրա, յանի ուրանց շենին զոլը:

Մին քանի վերստ քյնալան ետը, եշեցին տեսան պենդ մթնալ ա, էլ աշկըրնին պան շեր տեսնում: Անուշը քվորցը ենդան ըրավ, նի մտան մին շըխուր տեղ, ապուրը շուխան մենգնեցին, մեշկ-մեշկի տվին, վըխվըխիլավ էտ շըխուրումը քռն իլան:

Ըսավետը իրիքնակին լուար ընդյան ըտրանց յրան, քընըտեղ-դա երկըցան: Լաց էլ չի կար, վեր օտեն, սոված ճընապա ընդյան:

Մինչև մին էլ պենդ մթնիլը ճնապա քյնացին։ Վել մին շեն չի կար, Վեր մթնեց իրեքավ էլ ման եկին մին կալի դայդի դուզգ դալդա տեղ բթան։ Անկինը թա ըստեղ շատ լավ տեղ ա, եկեք քոն ինենք, ևս շատ եմ ըսդգմարակ։

Մին քյունչում ապուրը շուխան մենգնեցին, պըրընեցին։ Անկինը մելտեղը, էրկու քըվերքը կոխկերքին, Ուրուր խըտըտեցին, կոչ եկին քոն իւան։

Էրսի ըստավետը լիւսանալը բանտան, իրեքանն էլ զըրթնացան, իրեքանն էլ թունդ սոված ին, նստեցին մըսլըհաթի, հի՞նչ անեն, հի՞նչ օտեն, վեր սոված մեռնեն վեշ։ Անուշը մին պայման տըրավ, ասեց։ —Եկեք իրեքանս էլ պըպըզենք ցեթենք, վերիս ցեթը փըրփոր տա, ընդրան մորթենք օտենք։ Ըթհհնեց էլ ըրին, Մին փոս շինեցին, առաջ Անուշը միշին ցեթեց, հշեցին, տեսան փըրփոր չի կա, ևնդան Անկիը ցեթեց, ընդրա ցեթըն էլ չի փըրփըրեց, Անկինը պըպըզեց ցեթեց, կլետի փըրփընշանի ղայդի ընդրա ցեթը փըրփորեց, Անկինը ասեց։ —Դե հինչ կարամ ասի, իմ բախտն էլ էտքան տուս եկը, մինակ ծըզանա մին խնթիրք օնեմ, կըդըրեցեք, ենդան ինձ կը մորթեց, իմ կըլոխս շատ ա քոր կլամ, մին պատառ քուրեցեք, քըթըվեցեք, դինշանա, ենդան կը մորթեց։ Անկինը կլոխը տըրավ Անկիին ծընկանը, էրկու քըվերքը ըսկըսեցին ընդրա կլոխը քըթըվիւ։ Անկինը կլոխը կախ, ըսկսեց մանգավը տափը քանդիլ, քանդեց քանդից, մին էլ տեսավ մին շամիչ տուս պրծավ, էլլհա քանդեց, տեսավ ըտեղ շամիչ վնր ա, ծերքավը վեղը տես-տեն տվավ, մին հափուռ տուս կալավ, տեմ ըրավ քվորցը, թա։ — Չամիչ իմ քըթալ, ըխճըկերք, կերեք։ Քըվերքը ուրիսացան, իրեքն էլ շամշավ կըշտացան, Անկինն էլ մեռնիլան պըրծավ։

Իրեք քվորցավ մընացին ըտեղ, աման օր շամիչ ին տուս տամ օտում կըշտանում, մտածում էլ շին, վեր ըտեղատ քյնան։

Պանից տուս եկը, էտ ամբարը թաքավերինն ա, ընդրա ծիւանցը ունչին ա։ Թաքավերին ծիւանցը կորմը պըկասում ա, ծիւանցը սկսում են լզարիլ։ Մին օր թաքավերը տեսավ, վեր ուրան ծիյանքը շատ են լզարալ, ախոռապեաին յրան թունդ կըզնըվեց, թա։ —Տու ծիյանքը լավ շես պահում, ընդրանց փայ շամիչը կլուզանում ես։ Ախոռապետը ուրթում կերավ, թա։ —Աստուժ, երգինք, կետինք, խարար շեմ, ես շամիչ շեմ կըտղացալ, Թաքավերը հըվատաց վեշ, մին քանի մարթիք դարկեց կյանմին շորս զուկերը ման եկին, էտ իրեք ըխճըկորցը փըռնեցին պերին թաքավերին կոխկը, Թաքավերը ըտրանց հըցըփորց ըրավ, թա։ —Տուիք հի՞նչ իլլի-միլ-

լաթ եք, ըստեղեր հինչ կործ օնեք, ծիանցը շամիլը խե՞ կլուղա-
նում եք:

Անուշը թաքավերին նաղըն ըրավ ուրանց կլինավը անց կը-
ցածը, ենդան էլ թա.—Մհեկ հինչ օգում եք, մեզ ըրեք, մենք ծեր
զուն ենք:

Թաքավերը առաջ-առաջ Անուշին հրցըրուց.—Ասի՛ տեսնամ,
քու ծերքավըտ հինչ ա կյամ, հինչ կը կարաս անես, բեզ հինչ կը-
կործի տընեմ: Անուշը ասեց.—Ես ծեզ հետի լավ-լավ խալիշեր կը
կլիրծեմ: Անիկն էլ ասեց.—Ես էլ ծեզ հետի համուվ ճաշեր կը կա-
րամ վկիր: Անկինին էլ վեր հրցըրուց, էն էլ ասեց.—Ես էլ կը կա-
րամ, քու էն շեյրան տղիտ հետի, վեսկիբաթքյուկ խոխերք պիրեմ:

Անկինը շատ նախշում, համ էլ աստղավ ախճիկ էր, թաքա-
վերը հավան կրցավ, փսակեց ուրան տղին նհետ: Անկինը տա-
ռավ թաքավերի հարթնը, Անուշին պյարա էր կյործնամ, Անիկն էլ
լավ-լավ ճաշեր էր էփում:

Անկինին փըսըկվիան իննը ամիս վեր անց կըցավ, մին վես-
կիբյաբյուլ, մազերը կորզնոտ տղա պերավ: Թաքավերը ուրիշ
տատմերի դավերյա շի ըրավ, Անուշին նան Անիկին դարկեց, վեր
ուրանց քըլորը տատմերութուն անեն:

Էս քուռացած քըլերը շատ խային զատեր ին, տրանց աշկը
եր շի կալավ, վեր ուրանց կումը քերը թաքավերի հարթնըն ա-
տառալ բոլ շի, մհեկ էլ վեսկիբյաբյուլ տղա յա պերալ: Ծնդրանք
խոսկընին մին ըրին, Անկինին խոխան պարուավը տարան թու-
ղեցին հեռու, մին հանդում, էրկու մեծ քարի զաթում, ուրանը ետ
տառան եկին խովին տեղը մին շան թուլա տըրան:

Խաբանը տարան թաքավերին նան ուրան տղին: Թաքավերը,
ուրան տղան էս խաբանը վեր լսեցին, թամմուկ կլմվեցին, զյու-
դում շին, թա հինչ անեն, թաքավերը հոաման տվավ Անկինին
տարան կոխեցին մին կարասի մեշ, կարասն էլ տըրան ննըպին
զրադին, աման քյացող, եկող պիտկա էտ կրասին միշին թքի:
Օրանը մին թիքա հաց ին քըում կարասը, էրկու կուտում էր նուր
ին տամ, վեր խմի, մեռնի վել:

Անկինին թողանք էտ մեծ կըրասին միշին, մենք քյնանք տես-
նանք բնդըրա վեսկիբյաբյուլ տղան հինչ տառավ էն հանդումը:

Մին իծարած ուրանց շենին էծերը պահում էր էտ համին
հանդումը: Իծարածին թոբումին միշին մին շափուշը սատկած էծ
կար, էտ էծը մին պառավ կընդան էր պիտկանում:

Պըռավին էծը աման օր, օրվա մին վախտին կորչում ա, դը-
րըրհնդյուն վախտին կյամ խառնվում էծերին: Իծարածը կլինի շի
քնդինմ, թա էտ պըռավին էծը աման օր շտեղ ա կորչում, մին էլ
տոնե կյամ: Պառավն էլ ըսկսեց զրբմանալ, վեր էծը էլ կաթնը շի
տամ, ծըճերը տարտակ ա տոն կլամ: Պառավը քյնաց իծարած-
ին նհետ կուզ ըրավ, թա.—Տու աման օր իմ էծը քթում ես, էս
ծծերը տարտակ ա տոն կյամ, ցմաքած էլ շի, վեր ասեմ ցմա-
քալ ա, տու մեղավեր շես:

Իծարածը ուրթում կերավ, վեր ինքը խարար շի: Պառավը
հըգատաց վել, էքսի օրը իծարածան թաքուն պառավը քիւսունմը
պահնեց, դարադանդարա քյնաց մին դալդա տեղ նստեց, աշկը
ուրան էծին յրան պահնեց: Մին էլ տեսավ ուրան էծը սուլքուն
թողեց, մին դոլի յրա քյնաց, հսավ էրկու մեծ քարի, նի մտավ էտ
քրերի դաթումը շքրուեց: Պառավը էծին ենդան քյնաց, տեսավ ու-
րան էծը հենա մին վեսկիքյաթյուկ ըրախի ծեծ ա տամ: Պառավը
դաստին կլինի ընդյավ, վեր էտ խոխան թաքավերին թռունըն ա,
էն կարասին միշին ընճըկանը խոխան: Էտ խոխան երկալավ, պե-
րավ տոն, էծին կաթնավը պահնեց մըծըցրուց:

Էս վեսկիքյաթյուկ խոխսին անումը պառավը տըրանվ Կունի
թաքավեր:

Կունի թաքավերը հենդ տրեկան տառավ, մին օր պառավը
էտ խոխսին երկալավ, քյնաց թաքավերին բաղը, վարթ-մինիշակ-
ծաղիկ քաղեց, փունջ ըրավ, տրավ խոխսին ծերթին ասեց:—Բալա
ջան, էս ծաղկի փունջը կը տանես հեն է, էն կըրասին միշին մին
ջահիլ կնեկ կա, կը տաս ուրան, վեր, պան ա, քեզ փունեն տանեն
թաքավերին կոխկը, հրցընեն, թա:—Խե ծաղիկ ես տվալ կրասին
միշին կընդպանը, կասես:—Էն իմ մերըն ա, տվալ եմ:

Կունի թաքավերը վարթ-մինիշակի փունջը եր կալավ տարավ
քցեց կըրասին մեշը, համ էլ կանչեց:—Զիզա, էտ ես իմ պերան,
Կունի թաքավերը, քու բալատ:

Սաղիկնին կարասը քցիլիս, թաքավերին դարավուզին տե-
սավ, ասսանց եկը էտ խոխսին կոնան փոնեց, հրցըրուց:—Ա խո-
խա, էտ վարթերը խե՞ ըծեցիր կրասին մեշը, թա տու տեսնում
չե՞ս, վեր քյնացնդ եկողնին էտ կրասին միշին թքում են:

Էն կունի խոխան իշկի էլ ընդրանա վրխտավ վել, պադասխան
տվավ, թա:— Լավ ըրի, վեր վարթը ըծեցի կարասը, էն կրասին
կնեկը իմ զիզան ա:

Թաքավերին դունլուղին խոխսին կոնան փոնեց, քաշ տալավ
տարավ թաքավերին կոխկը: Հինչ վեր տեսալ էր, պատմեց: Թա-

բաքերը մին լավ վարավուրդ ըրավ էտ խուխին, տուրն եկավ, բըզզվեց վեւ, հրցըրուց, թա.—Տու հո՞ւ խոխա ես, անումըտ հի՞նչ ա:

—Իմ անումըս Կումի թաքավեր ա, ես էլ էն կրասին միշին կընդանը խոխան եմ: Թաքավերը խոր-խոր եշեց էտ խուխին, տեսավ, վեր շատ նըման ա ուրան տղին, ընդրա աշկերը, ճակատը, կլնիսը քեթը, լոխ-լոխ պըտատած ուրան տըղան ա կումուրացած:

—Բալա ջան, բա քու անումըտ հո՞ւ վա տըրան Կումի թաքավեր:

—Իմ պապունց այանը:

Թաքավերը մարթ զարկեց իծատեր պուավին պերին ուրան կոխկը: Թաքավերը էտ պըռավին հրցըրուց ըրավ, թա.—էտ խոխան քեզ շտեղա՞ն ա, էտ խուխին անումը խո՞ւ Կումի թաքավեր եք տըրանլ:

Պառավը հինչու վեր գուլըն էր, մին-մին պատմեց, ասեց.—Խոխան էրկու ըմսական ա իլալ, վեր ուրան էծին կաթնավը պահալ ա, մհեկ էլ տեսնում եք, հնեն գ տրեկան ա, ես էտ խուխին ըշխարժին շանք սունկում եմ, իմ պահած խոխան ա, իմըն ա: Ամմամին պան էլ ես հրցնեմ, տոն, թաքավերն ապրեծ կենա, տեսած կա՞ս, վեր կնեկարմաղը շան թուզա ծնի, տա հվատալի պան ա՞+, էս Կումի թաքավերը քու թոռնըտ ա, էն կրասին միշին խեղճ բեշշարան կնդանը տղան ա: Ընդրա խային քըվերքը ծեր կլնիսը քլալադ են եկալ: Խոխան տարալ են թուզացալ հանդումը, իմ էծըն էլ քըշնացան ա ծեծ տվալ, ես էլ պերան եմ իմ տղաս, իմ թոռնըս շինալ:

Թաքավերին աշկերը Արթեկալեց, խըտըտեց Կումի թաքավերին պըշպըշորեց, տարավ տոն:

Դաստին հրաման կիրիլ տըվավ, կրասին միշան Անկինին տոն կալան պերին տոն, լըլքըրին, թաքուհու շորեր կլնց տվին, խոխան տվին ուրան:

Պառավին էլ պերին, տառուն Կումի թաքավերին իսկական պապունց այան:

Անուշին, մին էլ Անիկին կըպեցին ծիանցը հաքլվան, ծիանքը քյշեցին, ընդրանց էնքան քաշ-քաշ ըրին, վեր գյուղանդու տառան:

Թաքավերը, ուրան տղան, Անկինը, իծատեր պառավը, Կումի թաքավերը հըսան ուրանց մուրավին, տուք էլ հըսնեք ծեր մուրավին: